

ՀՀ բանկային համակարգի 2013 թ-ի երկրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

2013 թ-ի երկրորդ եռամսյակի, ինչպես նաև ամբողջ 1-ին կիսամյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 22.2 մլրդ դրամ, վնասը՝ 1.56 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 20.64 մլրդ դրամ, այդ թվում՝ երկրորդ եռամսյակում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 13.12 մլրդ դրամ, վնասը՝ 0.49 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 12.63 մլրդ դրամ: Առաջին կիսամյակը վնասով են փակել համակարգի երեք բանկ, իսկ հաշվետու եռամսյակը՝ երկու բանկ:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2013 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 3.1 %-ով կամ 78.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,641.1 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 153.9 մլրդ դրամով կամ 7.5 %-ով: Վերոնշյալին ավելացնենք, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 9.5 %-ով կամ 229.0 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա 1-ին կիսամյակում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել էին 6.5 %-ով կամ 135.0 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ համակարգի ընդհանուր ակտիվների նվազում էր գրանցվել միայն նախորդ տարվա առաջին եռամսյակում. այն կազմել էր մոտ 0.9 % կամ 18.9 մլրդ դրամ:

Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 3.3 %-ով կամ 56.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 8.1 %-ով կամ 13.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,775.2 և 177.9 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 9.5 %-ով կամ 134.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 2.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 9.6 %-ով կամ 154.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 5.5 %-ով կամ 9.2 մլրդ դրամով: Համադրելու համար նշենք, որ նախորդ տարվա 1-ին կիսամյակում համակարգի վարկային ներդրումներն ավելացել էին 16.0 %-ով կամ 213.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 7.9 %-ով կամ 10.6 մլրդ դրամով: 2013-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 67.2 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնենասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 63.5 %-ը կամ 1,126.9 մլրդ դրամ, և վերոնշյալ ցուցանիշն երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 0.9 %-ով կամ 9.6 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 8.0 %-ի կամ 75.1 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն հավելենք, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են մոտ 7.5 %-ով կամ 78.7 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա առաջին կիսամյակում՝ 15.3 %-ով կամ 135.0 մլրդ դրամով:

2013 -ի հունիսի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2013 -ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 4.8 %-ով կամ 25.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 550.1 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի

ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 9.1 % կամ 38.0 մլրդ դրամ: Միաժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում ֆիզիկական անձանց տրված վարկերը ավելացել են 12.3 %-ով կամ 60.4 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 17.5 %-ի կամ 67.8 մլրդ դրամի դիմաց: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 31.0 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 20.2 %-ը կամ 359.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 7.5 %-ը կամ 133.5 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 5.2 %-ով կամ 17.8 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 0.8 %-ով կամ մոտ 1.1 մլրդ դրամով, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում սպառողական վարկերի ծավալն աճել էր 4.3 %-ով կամ 11.5 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 7.0 % կամ 7.9 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա առաջին կիսամյակում սպառողական վարկերն ավելացել են մոտ 11.5 %-ով կամ 37.0 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերը՝ 8.9 % կամ 11.0 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա առաջին կիսամյակում վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար ավելացել էին՝ 12.1 %-ով կամ 30.3 մլրդ դրամով և 8.4 %-ով կամ 9.4 մլրդ դրամով:

:

Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան



Պարտավորություններ

2013-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 2,214.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 21.5 %-ով կամ 392.2 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 3.2 %-ով կամ 68.8 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում՝ 8.8 %-ով կամ 147.4 մլրդ դրամով:


Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 2.6 %-ով կամ 21.0 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 7.2 %-ով կամ 40.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 823.3 և 606.1 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 2.2 % կամ 14.2 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 4.6 % կամ 6.8 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային նվազումը կազմել 5.4 % կամ մոտ 14.7 մլրդ դրամ, ցպահանջ ավանդների աճը՝ 19.0 % կամ 55.5 մլրդ դրամ:

Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում աճ էր գրանցվել բոլոր ավանդների գծով. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 9.0 %-ով կամ 53.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 11.2 %-ով կամ 51.6 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 1.6 %-ով կամ 2.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 2.9 %-ով կամ 13.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 5.8 %-ով կամ 13.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 0.1 %-ով կամ 0.1 մլրդ դրամով:


Միաժամանակ փաստենք, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում պարտավորություններն աճել են 10.6 %-ով կամ 211.3 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 7.2 %-ի կամ 122.8 մլրդ դրամի դիմաց, ընդ որում՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 12.0 %-ով կամ 87.9 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 13.2 %-ով կամ 78.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝

6.8 %-ով կան 9.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 23.3 %-ով կան 114.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել են 2.3 %-ով կան 5.9 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 45.5 %-ով կան 108.9 մլրդ դրամով: Համադրելու համար նաև նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 16.4 %-ով կան 91.9 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 18.1 %-ով կան 78.5 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 10.7 %-ով կան 13.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 4.0 %-ով կան 19.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները աճել էին 15.8 %-ով կան 33.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 18.4 %-ով կան 52.8 մլրդ դրամով: Ասվածին միայն հավելենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 64.6 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2013 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան



Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 2.3 %-ով կամ 9.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 427.2 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն ավելացել էր 1.7 %-ով կամ 6.5 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում բանկերի ընդհանուր կապիտալը ավելացել է մոտ 4.3 %-ով կամ 17.7 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում՝ 3.2 %-ով կամ 12.2 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից կանոնադիր կապիտալը հաշվետու եռամսյակում փոփոխություն չի կրել, իսկ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը) հաշվետու եռամսյակում աճել է 14.2 %-ով կամ 20.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 244.1 և 163.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 57.2 և 38.3 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում կանոնադիր կապիտալը նույնպես փոփոխություն չէր կրել, իսկ եկամուտների պահուստն աճել էր 11.4 %-ով կամ 13.7 մլրդ դրամով:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



Եկամուտներ եվ ծախսեր

2013 թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 95.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 79.6 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երկրորդ եռամսյակում ընդհանուր եկամուտները կազմել էին 86.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 74.3 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընդհանուր եկամուտները և ծախսերը նախորդ եռամսյակի ընդհանուր եկամուտներին և ծախսերին գերազանցել են համապատասխանաբար 13.3 %-ով կամ 11.2 մլրդ դրամով և 9.1 %-ով կամ 6.7 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում բանկերը ստացել են 179.4 դրամի եկամուտ և կատարել 152.6 մլրդ դրամի ծախս, իսկ նախորդ տարվա առաջին կիսամյակում համանուն ցուցանիշները համապատասխանաբար կազմել էին՝ 162.0 մլրդ դրամ և 139.1 մլրդ դրամ:


Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 12.63 մլրդ դրամ մաքուր շահույթ (շահութահարկը հանած), որը 2012 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթին գերազանցել է 3.3 մլրդ դրամով: Ասվածին նաև ավելացնենք, որ այս տարվա առաջին կիսամյակում համակարգում ապահովվել է 20.64 մլրդ դրամի մաքուր շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 17.83 մլրդ դրամի դիմաց:

Ամփոփ ցուցանիշներ

2013-ի երկրորդ եռամսյակի արդյունքներով բանկային համակարգի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 5.1 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.82%: Պետք է արձանագրել, որ անցած տարվա նույն ժամկետի համեմատ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության աճ 0.41 տոկոսային կետով և ակտիվների շահութաբերության նվազում 0.03 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2013 -ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
	Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
				Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/վնաս	Զբաղ. շահույթ II-եռ.
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
ԱԿԲԱ Բանկ	260925,9	3,1	2	189673,2	6,5	209533,9	3,6	3	57383,5	4,1	51392,0	1,4	1	30000,0	0,0	12880,8	1628,3
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	221998,6	-0,2	5	153873,1	7,1	182208,8	-1,2	5	51629,0	-1,7	39789,8	4,9	2	18434,4	0,0	19602,6	2103,8
Արդշինհիմվեստբանկ	233482,4	4,8	4	154875,5	3,7	194894,1	5,3	4	61454,4	3,7	38588,3	2,7	4	15513,6	0,0	18016,2	1014,9
ՎՏԲ Հայաստան Բանկ	259952,2	8,7	3	205811,3	9,8	226567,2	9,5	2	74297,5	5,3	33385,0	3,8	5	13906,2	0,0	15262,0	1088,6
Կոնվերս Բանկ	121712,8	3,8	9	80983,9	9,2	104289,8	4,4	9	32611,8	5,2	17423,0	0,5	11	4923,3	0,0	8670,8	21,1
Յուսիբանկ	138053,1	-4,5	7	106991,7	-0,7	118772,7	-5,3	7	72575,3	1,2	19280,5	0,8	9	11400,7	0,0	7624,3	391,7
Հայէկոնոմբանկ	69777,8	8,5	13	39755,2	0,4	59868,2	9,1	13	15979,6	10,9	9909,5	4,6	17	2333,3	0,0	1845,5	323,7
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	366358,8	18,6	1	161086,9	-4,3	327211,4	20,9	1	56392,5	6,1	39147,4	2,3	3	25475,9	0,0	13554,8	1386,8
Ինեկոբանկ	105337,1	-8,9	11	84692,4	3,0	84860,1	-12,2	11	20734,6	3,3	20477,0	8,3	8	7894,4	0,0	9385,6	1455,4
Հայբիզնեսբանկ	182679,7	-9,3	6	125591,8	-2,5	161239,0	-10,6	6	57265,5	-11,3	21440,7	1,8	6	17500,0	0,0	3416,5	991,5
Անելիք Բանկ	63885,8	2,2	14	36376,3	-3,7	50498,6	3,5	14	23737,0	-0,5	13387,3	-2,5	14	14300,0	0,0	-1176,5	-341,5
Առեկսիմբանկ	127076,5	3,0	8	98173,8	3,8	109893,1	3,3	8	29751,2	5,9	17183,4	1,2	12	12347,3	0,0	4467,9	204,8
Արցախբանկ	90193,8	1,1	12	63155,2	1,2	77100,7	1,1	12	15897,4	0,2	13093,1	1,2	15	6561,2	0,0	4363,7	157,0
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	110840,1	-4,0	10	85922,2	7,5	92962,0	-5,2	10	19911,8	0,2	17878,1	2,6	10	8335,4	0,0	8677,2	880,2
Արմսվիսբանկ	58449,5	9,4	15	30298,6	7,2	44766,1	11,2	16	4932,9	1,7	13683,4	3,8	13	7002,0	0,0	3751,5	565,0
Զարգ. Հայկական Բանկ	55593,7	3,6	16	39317,3	4,6	46907,9	4,5	15	32500,8	8,1	8685,8	-1,0	19	4556,7	0,0	3754,9	199,3
Պրոմեթեյ Բանկ	54848,6	1,2	17	33182,7	1,6	33878,1	0,7	19	12818,9	8,0	20970,5	2,0	7	14400,0	0,0	6394,0	387,4
Բիբլոս Բանկ Հայաստան	43298,6	-13,8	19	33850,2	-10,7	34422,1	-16,6	18	16669,7	-3,6	8876,5	-1,0	18	8382,2	0,0	423,5	-149,3
ԲՏԱ Բանկ	12880,6	12,1	21	6982,3	7,4	7199,9	23,8	20	2512,1	13,2	5680,7	0,1	21	6520,0	0,0	-878,5	134,8
ՊրոԿրեդիտ Բանկ	45960,5	4,9	18	37999,9	5,5	39972,8	5,9	17	11625,6	14,5	5987,7	-1,6	20	7490,0	0,0	-1502,2	98,6
Սելլաթ Բանկ	17818,2	11,1	20	6619,0	12,8	6912,1	32,4	21	80,9	-0,9	10906,1	0,8	16	6850,0	0,0	3794,8	89,4
Ընդամենը	2641124,3	3,1		1775212,5	3,3	2213958,6	3,2		670762,0	2,2	427165,8	2,3		244126,6	0,0	142329,4	12631,5